Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«02» դեկտեմբերի 2020թ. N վ-48/3

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակից Զ. Փեփոյանի կողմից 07.09.2020 թվականին հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանի կողմից Երևան քաղաքի Բայրոնի փողոցի հ. 10 շենքի հ. 24 հասցեում ինքնակամ իրականացվել է բնակարանի վերակառուցման, մասնավորապես՝ ճակատային հատվածում պատերի քանդման և քարե շարվածքով նոր պատերի կառուցման, ինչպես նաև պատշգամբի հատվածում շվաքարանի կառուցման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 07.09.2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 035706 արձանագրությունը (հետայսու՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանին Երևանի քաղաքապետարանում կայանալիք նիստերի վերաբերյալ ծանուցելու համար, սակայն նամակը չի հանձնվել հասցեատիրոջը և հետ է վերադարձվել կամ մինչ օրս չեն վերադարձվել, իսկ քաղաքացին չի ներկայացել Երևանի քաղաքապետարան, ուստի նկատի ունենալով, որ չի ապահովվել վերջինիս պատշաճ ծանուցումը, հետևապես առկա է իրավական հիմք՝ մինչ քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանին պատշաճ ծանուցման փաստի առկայությունը՝ կասեցնել գործի վարույթը:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքի դրույթներով չեն կանոնակարգվում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների կասեցման դեպքերը, հիմքերն ու կարգը, և այդպիսի կարգավորումները սահմանվում են «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով (հետայսու՝ Օրենք), ուստի ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ 07.09.2020 թվականին կազմված հ. 035706 արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթը 28.10.2020 թվականի հ. Վ-43/36 որոշմամբ կասեցվել է:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը քաղաքացի Աննա Գալստյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կրկին միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Աննա Գալստյանին Երևանի քաղաքապետարանում 02.12.2020 թվականին կայանալիք գործի քննությանը ծանուցելու համար:

Փոստային ծառայության ստացման-հանձման հետադարձ թիվ AG026732586AM ծանուցագրի համաձայն՝ գործի քննության անցկացման վերաբերյալ ծանուցումը հանձնվել է հասցեատիրոջը:

Քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանը ծանուցված լինելով 02.12.2020 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում՝ որպես մեկ համակցություն, հետազոտվեցին արձանագրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 26.10.2020 թվականի հ. 19/93418 գրությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը և իրավախախտման լուսանկարը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևան քաղաքի Բայրոնի փողոցի հ. 10 շենքի հ. 24 հասցեում ինքնակամ իրականացվել է բնակարանի վերակառուցման, մասնավորապես՝ ճակատային հատվածում պատերի քանդման և նոր պատերի կառուցման, ինչպես նաև պատշգամբի հատվածում շվաքարանի կառուցման շինարարական աշխատանքներ: Իրականացված շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշմամբ սահմանված կարգի 4-րդ հավելվածի 1-ին ցանկի 2-րդ և 3-րդ բաժիններում նկարագրված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներում:

Քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և

ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված հակահիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ, 252-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 3-րդ մասի 2-րդ պարբերությունով, Երևանի քաղաքապետի 14.02.2020 թվականի թիվ 460-Ա որոշմամբ՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանի նկատմամբ 28.10.2020 թվականի հ. Վ-43/36 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. Քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Նախազգուշացնել քաղաքացի Աննա Սերգեյի Գալստյանին, որ շինարարական աշխատանքներն ինքնակամ շարունակվելու դեպքում այն կառաջացնի վարչական տուգանք 2.500.000 ՀՀ դրամ գումարի չափով:

4. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվեհամարին:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, իսկ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԱՄ ԱԲՈՎՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19» Հոկտեմբերի 2020թ. N 46/18

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակից Գ. Պողոսյանի կողմից 08.10.2020 թվականին հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ քաղաքացի Անդրանիկ Ռուդոլֆի Հովակիմյանի կողմից Երևան քաղաքի Արցախի փողոցի հ. 28/2 հասցեում ինքնակամ իրականացվել է շինության հեծանների կառուցման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 08.10.2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 036377 արձանագրությունը (հետայսու՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Քաղաքացի Անդրանիկ Ռուդոլֆի Հովակիմյանի լիազորված անձ Արմեն Վաղինակի Ջանինյանը ծանուցված լինելով 19.11.2020 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին՝ չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում՝ որպես մեկ համակցություն, հետազոտվեցին արձանագրությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, լիազորագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 06.11.2020 թվականի հ. 51/44-105252 գրությունը և իրավախախտման լուսանկարները:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ քաղաքացի Անդրանիկ Ռուդոլֆի Հովակիմյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևան քաղաքի Արցախի պողոտայի հ. 28/2 հասցեում ինքնակամ իրականացվել է շինության վրա հեծանների կառուցման շինարարական աշխատանքներ: Իրականացված շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշմամբ սահմանված կարգի 4-րդ հավելվածի 1-ին ցանկի 2-րդ և 3-րդ բաժիններում նկարագրված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներում:

Քաղաքացի Անդրանիկ Ռուդոլֆի Հովակիմյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ, 252-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 14.02.2020 թվականի թիվ 460-Ա որոշմամբ՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի Անդրանիկ Ռուդոլֆի Հովակիմյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1–ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

2.Նախազգուշացնել քաղաքացի Անդրանիկ Ռուդոլֆի Հովակիմյանին, որ շինարարական աշխատանքներն ինքնակամ շարունակվելու դեպքում այն կառաջացնի վարչական տուգանք 2.500.000 ՀՀ դրամ գումարի չափով:

3. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվեհամարին:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, իսկ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԱՄ ԱԲՈՎՅԱՆ